

16666

d

9/7



323.

Հ-88

«Յառաջ-ի» գրադարան

ՏԵՍ ԱՐ Տ

№ 71

Գ. ԽՈՎՈՏՈՐԺՈՒԿԻ

# ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑ

ԱԻՏՈՆՈՄԻԱ. ԵԿ

ՖԵԴԵՐԱՑԻԱ

Թարգմ. Գ. Խ.

500  
25-60

25 կող.

ԱԽԱԼՔԱԼԱԲ.

1917.

12 JUL 2013

15 JAN 2010

26 SEP 2006

№ 71

«Յառաջ»-ի Գրադարան

№ 71

323.1  
8-91

Գ. ԽՈՎՈՅՈՒԹՈՒՆ.

# ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑ

ԱհօնօՄԻԱ ԵԿ

11

ՖԵԴԵՐԱՑԻԱ

1929

Թարգմ. Գ. Խ.

1917 թ.



Ա. ԽԱՆԻՔԻԱՆ Ա. ԽԱՆԻՔԻԱՆ

Ի՞նչ է Աջդիմիթիկներ

Եթէ մենք լաւ ուշք գարձնենք, թէ ինչն է մարդկանց ստիպում իրանց համարել այս կամ այն ազգի անդամ,— կը տեսնենք, որ մարդկանց զանազան ազգութիւնների բաժանւելու հիմքը կազմում են հետեւալ չորս փաստերը. ընդհանուր ծագումը, լեզուն, կուլտուրական և քաղաքական ընդհանուր անցկալը և, վերջապէս, բնակավայրի կամ տերբիտորիայի ընդհանուրութիւնը:

Բացատրենք, թէ այդ փաստերից ամեն մէկն ինչ համեմատական նշանակութիւն ունի ազգութեան կազմւելու և զարգացման համար: Դեռ ևս «ազգ» ասելով՝ կը հասկանանք մարդկանց մի խումբ, որոնք կապւած են իրար հետ ընդհանուր ծագումով, լիզով, պատմական անցեալով և բնակավայրով՝ կամ տերբիտորիայով:

Ինչ վերաբերում է առաջին փաստին, այսինքն ընդհանուր նախնիքներից սերւած լինելու դերին, այդուեղ ընութեան մասնակցութիւնն ազգութեան կազմութեան մէջ անկասկած է: Բայց այդ ցեղային կամ դասային սկզբունքը—միևնոյն ցեղին պատկանելը—առաջնակորդ նշանա-

կութիւն ունէր ազգութիւնների կազմւելու գործի մէջ հին ժամանակներում, հեռաւոր, նոյն իսկ նախապատմական շրջանում։ Իսկ նոր ժամանակներում, ցեղային սկզբունքի նշանակութիւնը սաստիկ ընկնում է, որովհետեւ այժմ համարեան չըկան մաքուր, անխառնուրդ ցեղեր։ Այժմեան համարեան բոլոր ցեղերն (բասա) արդիւնք են յաճախակի արիւնախառնութիւնների, գուցէ և անխառնուրդ ցեղերն արդէն բոլորովին անհետացել են։ Եւ, մարդկալին զարգացման հետ միասին, որքան աւելի առանձին ցեղերը շփուում են երար հետ, այսքան աւելի մի և նոյն նախնիքներից սերւած լինելը ոչնչի է հաւասարուում, որովհետեւ մեզանից ամեն մէկը կարող է իր ճիւղագրութեան մէջ գտնել իսկստ տարբեր ցեղերի ներկայացուցիչներ։ Հետեւաբար՝ ցեղային սկզբունքը, մեծ նշանակութիւն ունենալով ազգութեան կազմակերպման սկզբնական աստիճաններում կորցնում է իր նշանակութիւնը պատմական զարգացման ընթացքում։

Ազգութեան երկրորդ և ամենակարևոր նշանը պէտք է համարել լեզուն, որով խօսում են ազգի անդամները։ Եւ իսկապէս, թէ և լեզուն ժամանակի ընթացքում սաստիկ փոխուում է—բաւական է միայն համեմատել, օրինակ, այժմեան մեր հայերէնը մեր նախնիքների գրաբարի հետ, —բայց չը պէտք է մոռանալ, որ լեզուի ընդհանրութիւնը կամ նմանութիւնը մեզ յաճախ մտածեցնել է տալիս մարդկանց ծագման ընդհանրութեան մասին, ի հարկէ այն մարդկանց, որոնք խօսում են մի և նոյն կամ իրար նման լեզուներով։ Դրա հետ միասին՝ լեզուն, իբր միջոց մարդկանց իրար հետ յարաբերութեան մտնելու, ապահովում է ազգային կուլտուրայի միութիւնը և նրա ամբողջական պահպանու-

թիւնը։ Ընդհանուր հաւատալիքները, աւանդութիւնները, առասպեկները, գիտելիքներն անցնում են սերնդից սերունդ և մատշելի են զանում ապրող սերնդին՝ լեզուի շնորհով։ Առանց ընդհանուր լեզուի՝ մի ազդ երևակայել անգամ չէ կարելի։ Փողովրդական ողի կոչւածը, հոգեկան ընդհանուր կառուցւածքը, մտածողութեան և զգացողութեան առանձայտկութիւնները, նրանց արտայայտութեան յատուկ բընոյթը մի որոշ ազգութեան մէջ,—այդ բոլորը կապւած են և պահպանում են այդ ազգի լեզուի շնորհով։ Կարելի է ասել թէ՝ քանի որ լեզուն կայ, ազգը չի կորչի, բայց որովհետեւ մարդկանց խօսած լեզուները զարգանում և նոյն իսկ նոր լեզուներ են երևան գալիս,—դա պաշտպանում է ազգերին երբ և է կորչելուց, նոյն իսկ ապագայում որքան որ, ի հարկէ, մենք կարող ենք թափանցել այդ ապագայի մէջ։

Ազգութեան կազմւելուն նպաստող երրորդ փաստը պատմական անցեալի ընդհանրութիւնն է, —թէ քաղաքական և թէ ընդհանրապէս կուլտուրական անցեալի արագիցիան։

Կերակուր ձեռք բերելու համար ժառանգած եղանակները, պիւղանտեսական և առետրա-արդիւնաբերական ընդհանուր վիճակը, մի խօսքով—կեանքի ամբողջ նիւթական կառուցւածքը, տնտեսական զարգացման առանձնայակութիւնները—միացնում են մարդկանց, մի ամբողջութիւն կազմում նրանցից։ Նրանց միացնում են նաև քաղաքական հաստատութիւնները, պետական և տեղական կեանքի ամբողջ կառուցւածքը, պետութեան դիբքը միւս պետութիւնների միջև, յարաբերութիւնը գէպի միւս պետութիւնները։ Յաղթող և յաղթ, ած ժողովրդի համար նշա-

նակութիւն ունի նաև նրանց իրար հետ ունեցած անցեալ կուփ յիշողութիւնները, մանաւանդ եթէ այդ կոփւը զեռ մինչև այժմ էլ չէ վերջացել: Այս ազգութիւնները, որոնք առաջ գոյութիւն են ունեցել իր անկախ պետութիւններ, կամ որոնք եղել են իր բաղադրիչ մասեր ուրիշ պետական միութիւնների կազմի մէջ,—ոչ այն պետութիւնների, որոնց պատկանում են այժմ,—սովորաբար շատ վառ ու կենդանի են պահում իրանց յիշողութեան մէջ այդ ժամանակը: Այդ բաղաքական, կուլտուրական և նիւթական անցեալի յուշերը և վերաբտադրութիւնները բոլորը միասին վերցրած՝ կազմում են այն պատմական տրադիցիան, որ խիստ թանկ է զնահատում ամեն մի ժողովուրդ: Այդ արագիցիան պահպանում է ծագման ընդհանրութիւնով և ժողովրդական կենցաղի բոլոր կողմերի ներկայ միատեսակ բնոյթով,—ի հարկէ այնտեղ, ուր դա գոյութիւն ունի, ուր ժողովրդական կեանքի ամբողջ կառուցւածքն առաջւայ նաև ունի թէն նոր՝ բայց ընդհանուր գծեր:

«Ազգութիւն» հասկացողութեան համար աւելի քիչ էական նշանակութիւն ունի չորրորդ փաստը—ժողովրդի ընակավայրի ընդհանրութիւնը: Մենք ասում ենք «աւելի քիչ», որովհետև անկախ պետական կեանք վարող աղդութիւնների հետ միասին, այն ընակավայրում, ուր նրանք մեծամասնութիւն են կազմում, գտնուում են ուրիշ ժողովուրդներ, աւելի նւազ երջանիկ պայմաններում ապրող: Այսպէս՝ օրինակ կեները թէն իրանց ընակած վայրում կազմում են մեծամասնութիւն, բայց այդ ընակավայրը բաժանւած է երեք մասի՝ բանութեան միջոցով. աւարիական, վերմանական և ոռւսական մասերի: Կան և ուրիշ ժողովուրդ-

ներ, որ մի և նոյն բնակավայրի վրայ են ապրում իրար հետ խառը, առանց որ և է խոշոր թւական առաւելութեան: Այդպէս է կովկասում, ուր ապրում են վրացիներ, հայեր, թուրքեր, օսեր, մինքըներ, իմէրէթներ,—տեղտեղ կազմելով միապաղաղ ազգաբնակութիւն, տեղ-տեղ էլ բոլորովին խառը: Վերջապէս ժողովուրդներ էլ կան, որոնք, ինչպէս օրինակ հրեաները, ոչ մի բնակավայրում, որքան էլ նա փոքր լինի, չեն կազմում ազգաբնակութեան մեծամասնութիւնը, թէկ իրանց թուով (մօտ 6 միլիոն) նրանք շատ աւելի են, քան որոշ տարածութեան վրայ անխառն աւպրող մանր ազգերից շատերը: Այդ պատճառով թէկ սովորաբար մեր հասկացողութիւնը կապւած է իր ընակավայրի և նոյն խոկ ինքնուրոյն պետական գոյութեան հետ,—բայց՝ վերոյիշեալ փաստերի հիման վրայ, պէտք է ընդունել. որ ազգ կոչւելու համար էական նշանակութիւն չունի, թէ արդեօք այդ ժողովուրդն այժմ ունի մի ընակավայր, որի վրայ կազմէ մեծամասնութիւն կամ փոքրամասնութիւն, թէ ոչ: Մի խօսքով, ազգութիւնը չէ դադարում գոյութիւն ունենալուց այն պատճառով, որ նա կորցրել է իր ընակավայրը կամ երբէք չէ ունեցել: Ամեն տեղ ազգութիւն գոյութիւն ունի, ուր մի խումբ մարդիկ կապւած են ցեղային, լեզւային և պատմական տրադիցիայի ընդհանրութիւնով:

Ազգութեան գաղափարի զանազան նշանների հետ ծանօթանալով, մենք կարող ենք աւելի մօտենալ այն հարցին, թէ ինչ է ազգութիւնը: Բայց դեռ ևս մի փոքրիկ շեղում անենք մեր հարցից:

Վ. Զօմբարդն իր «Սոցիալիզմը և սոցիալական շար-

ժումը ՀԽ դարում» գրքի մէջ նկատում է հետեւելը:

«Կօմմունիստական մանիֆէստն» սկսելով հետեւել յայտնի բառերով—«մինչև այժմ գոյութիւն ունեցող բոլոր հասարակութիւնների պատմութիւնը դասակարգային կուի պատմութիւն է»,—կար Մարքսը յայտնել է ՀԽ դարի ամենամեծ ճշմարտութիւններից մէկը: Բայց նա չէ ասել ամբողջ ճշմարտութիւնը: Ճշմարիտ չէ, որ ամբողջ պատմութիւնը միայն դասակարգային կուի է: Զումրադի կարծիքով «Հասարակութեան ամբողջ պատմութիւնը դառնում է երկու տեսակ հակասութիւնների շուրջը՝ հասարակական և ազգային»:\*) Այդ կարծիքին ենք և մէնք:

Իսկապէս՝ պատմական կեանքի բովանդակութիւնը կազմւած է ժողովրդների իրար գէմ վարւած կուից, ամեն մի ժողովրդի ներում դասակարգերի վարած կրուից և, վերջապէս, հասարակական դասակարգերի ներսում անհատների վարած կուից:

Պատմական զագգացման ընդհանուր ուղղութիւնն այնպէս է, որ ազգային կուը կամաց-կամաց յետ է քաշւում, այն ինչ դասակարգերի կուը քանի գնում աւելի վեհ է դառնում՝ որքան աւելի զարգանում է բանուրական լայն մասսաների գիտակցութիւնը: Ժողովրդների իրար գէմ վարած կուում մինոյն ժողովրդի դասակարգերը դուրս են եկել և աշխատ էլ դուրս են զալիս իբրև մի ամբողջութիւն, որը պատականում է մինոյն ժողովրդա-տնտեսական օրգանիզմին: Այդ պատճառով էլ

\*) Նայիր հայերէն թարգմանութեան 4 երեսը կամ ուսուեէնի 3 երեսը:

մինչև այժմ մինոյն ժողովրդա-տնտեսական ամբողջութեանը պատկանելը համարւում էր ազգութեան էական նշանը: Բայց որքան որ աշխատանքի միջազգային բաժանման և միջազգային առևտրի չնորով զարգացող արդիւնագործութիւնը չնջում է առանձին-առանձին ժողովրդա-տնտեսական օգտանիգմների սահմանները, այդ փակ տնտեսական ամբողջութեան նշանն ազգութեան հասկացողութեան համար աւելի և աւելի կորցնում է իր էական նշանակութիւնը:

Այսպէս ուրեմն՝ ազգութիւն ասելով, պէտք է հասկանալ մի ցեղ, որ խօսում է մի լեզով, կապւած է պատմական ընդհանուր անցեալով, քաղաքականապէս և տնտեսապէս միաւորւած է մի որոշ բնակավայրում: Չը պէտք է մոռանալ վերեւում ասածները և պէտք է յիշել, որ միայն լեզուի և պատմական արագիցիայի ընդհանրութիւնը միշտ անխուսափելիօրէն յատուկ են ազգութեան հասկացողութեանը:

### ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԷՌԻԹԻԻՆԸ.

Վերեւում ասացինք, որ մարդկային ամբողջ պատմութիւնը կտարարւում է այժմ էլ ազգութիւնների կուով և դասակարգերի կուով՝ այդ ազգութիւններից ամեն մէկի մէջ: Ազգութիւնների կուի հետեւանքն այն եղաւ, որ 18-դ դարերում կազմակերպւեցին ազգային ահազին պետութիւններ:

Նրանք կազմւեցին ուղղակի բանութեան ճանապար-

հով, — աւելի ուժեղ ազգութիւնները նւաճեցին և միացրին իրանց հետ աւելի թոյլերին: Բայց կային և ուրիշ պատճառներ, ինչպէս, օրինակ՝ պայմանագրեր կամ դաշնագրեր, ընծայաբերութիւններ, ժառանգութիւններ, փոխանակութիւն, հողերի գնումներ՝ բնակիչները վրաները: Ընծայաբերութիւնները, ժառանգութիւնները և փոխանակութիւնները տեղի ունեին «պինաստիական» կոչւած պատերազմների շրջանում, երբ մի քանի թագաւորութիւններ արիւնահեղ պատերազմներ էին սկսում, որպէսզի կորացնեն իրանց տիրապետութիւնները և գոհացնեն իրանց զինուրական փառասիրութիւնը: Նորագոյն ժամանակներս, երբ «պարսն կապիտալը» յաղթեց ամեն ինչի պետական կեանքում, զինապահական պատերազմները տեղի տևին գաղութային պատերազմներին: Այդպիսի մի պատերազմ էր, օրինակ սուս-եապօնականը: Գաղութային պատերազմը մի կոիւ է՝ ապրանքները ծախելու համար շուկայ ձեռք բերելու նպատակով:

Այդ բոլոր պատերազմների արդիւնքը լինում էր ազգային թշնամութեան սաստկանալը, թէ այն դէպքում, երբ դործը չէր վերջանում մի ժողովրդի միւսին գրաւելով, ինչպէս, օրինակ, 1870—71-ի ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ, և թէ գրաւելու դէպքում, ինչպէս այդ տեսնում ենք ներկայ Աւստրիայում և Ռուսաստանում: Պրոլետարեատի և աշխատաւոր գիւղացիութեան տեսակէտից՝ այդ ազգային թշնամութիւնն առանձնապէս վնասակար է պետութեան ներսում, որովհետեւ ոստիկանական պետութեան կառավարութիւնը, առանձին ազգութիւններին իրար հետ կուեցնելով, ճնշում է նրանց բո-

լորին էլ: Այդպիսով այդ ազգութիւնների բանւոր գասակարգը չէ կարողանում զբաղւել անմիջական կուով ընդդէմ իրանց կեղեքող ազնւական-կալւածտէրերի և առետրաարդիւնաբերական կապիտալի ասպետների, որոնք իրանց ձեռքն են զցել պետական իշխանութիւնը: Փոխանակ իրանց ստրկացնողների դէմ կոիւ մղելու, աշխատաւոր ժողովուրդը պէտք է կոիւ մղէ ազգային ազատութեան համար և դրանով իսկ թուլացնէ իր կոիւ սեփական ազգի մէջ գտնուող իր թշնամի դասակարգերի դէմ:

Ուրեմն՝ ազգային հարցի էութիւնը աշխատաւոր ժողովրդի համար կայանում է նրանում, որ հեռացնէ ազգային թշնամութիւնը և կոիւն այնքան, որ կարելի լինի կոիւ մղել իրան կեղեքողների դէմ լաւագոյն ապագայի հասնելու համար: Ուրիշ խօսքով՝ պրօլետարիատի և աշխատաւոր գիւղացիութեան շահերը պահանջում են ստեղծել այնպիսի հասարակական կարգեր, որոնց ժամանակ ազգային թշնամութեան և ազգային ընդհարումների փոխարէն՝ տեղի ունենար ազգութիւնների աղնիւ մքցում սոցիալիստական կազմակերպութիւնն աւելի շուտ իրականացնելու կուում: Որովհետեւ միայն սոցիալիզմի ժամանակ վերջ կը զրւի մի մարդու միւսի վրայ իշխելուն, և կը դադարի սովոր ստորացուցիչ կախումը կուշտից, աշխատաւորինը՝ արտադրութեան միջոցների սեփականաւորոջից: Աշխատաւորների համաշխարհային եղբայրութիւնը կարելի է իրականացնել միայն սոցիալիստական թիւնը կարելի է իրականացնել միայն սոցիալիստական հասարակութեան, ապագայ աշխատաւորական պետութեան մէջ: Այդ եղբայրութիւնից առաջ պէտք է տեղի ունենայ ազգերի եղբայրական դաշնակցութիւնը, և դրա

հիմքերը պէտք է և կարելի է դնել նեկայումս:

Ինչ վերաբերում է պատերազմները դադարեցնելու հարցին, կասենք, որ նրանք կը դադարին այն ժամանակ, երբ ներկայ պետութիւնների կազմը և փոխադարձ յարաբերութիւնները կը վերանորոգւեն աւտոնոմիայի և ֆէդէրացիայի (ինքնորոշման և դաշնակցութեան) սկզբունքներով: Միւս կողմից՝ պատերազմների վերջանալուն պէտք է նպաստեն միջազգային միջնորդ դատարանները և մըտական զօրքերի ոչնչացումը: Մշտական զօրքը վերացնելով և տեղը հաստատելով զինւած ժողովուրդ (միլիցիա), պետութիւնը կը զրկւի յարձակողական պատերազմ վարելու հնարաւորութիւնից, որովհետև ամեն մարդ լինելով զինւած և իր ծննդավայրում զինւորական ծառայութիւն կատարելով, թէ ամբողջ ժողովուրդը կը լինի զինւած, և թէ կառավարութիւնը, չունենալով յատուկ ու մշտական բանակ, զրկւած կը լինի հնարաւորութիւնից ժողովրդի վիզը փաթաթելու որ և է պատերազմ: Բայց չը պէտք է մոռանալ, որ միջազգային ընդհարման բոլոր պատճառները և ազգային թշնամութիւնը վերացնելուց յետոյ կարելի է վերացնել պատերազմը: Իսկ ազգային թշնամութիւնը շուտով կը դադարի, եթէ առանձին ազգութիւնների միջև հնար եղածի չափ շատ մացւի ֆէդէրատիվ (դաշնակցական) յարաբերութիւններ, իսկ ազգութիւններն իրանք իրանց համար լինեն աւտոնոմ կամ անկախ: Յետոյ մենք աւելի մանրամասնօրէն կանգ կառնենք այդ հարցի վրայ, կը պարզենք թէ ինչու են անհրաժեշտ աւտոնոմիան և ֆէդէրացիան, կը բացատրենք դրանց էութիւնը և անհրաժեշտութիւնը, իբրև միջոցներ ազգային հարցը մօտաւոր պարտայում լուծելու համար:

Խշճի Աջամանութիւնը եկ ԱնչՍՏԻ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄԸ:

Խղճի աղատութիւնը գլխաւոր պահանջն է, որ անում է մարդկային էակը ներկայ իրաւական<sup>1)</sup> պետութիւնից: Առանց ընդունելու անհատի խզճի աղատութիւնը, հոգեկան ոչ մի ստեղծագործութիւն չէ կարելի ենթադրել: Անհատի կեանքն անցնում է ստեղծագործութեան մէջ, իսկ ամեն մի ստեղծագործութեան հիմնական պահանջն ազգութիւնն է: Ամեն մի անհատ ձգտում է կեանքի մէջ որ և է բանով իրան ցոյց տալ: Իսկ նա իրան կարող է ցոյց տալ միայն ստեղծելով զանազան բարիքներ, կը լինի զրանք նիւթական թէ հոգեկան՝ միևնոյն է: Ենհատի ստեղծագործական գործունէութիւնը արտայատում է կրօնի, գիտութեան, գեղարւեստի, վերջապէս, ֆիզիքական աշխատանքի ասպարէզներում:

Անհատի այդ ամբողջ ստեղծագործող գործունէութիւնը կարող է ամենից աւելի բաւարարութիւն պատճառել իրան՝ ստեղծագործող անհատին, նոյնպէս և ամենից աւելի օգուտ տալ ըրջապատղներին, եթէ որ անհատը ոչնչով չէ սահմանափակւած կամ նեղւած թէ իր գործունէութիւնն ընտրելու, համաձայն իր ձգտումների և տաղանդի, այնպէս և ստեղծագործութեան մէջ այն ասպարէզում, որ նա ընտրել է իր համար: Դրանում է կայանում ընդունութիւնը կամ ինչպէս ասում անհատի ինքնորոշման աղատութիւնը կամ ինչպէս ասում են, նրա աւտոնոմիան: Եւ եթէ խզճի աղատութիւնը ստիւն, է մեզ ընդունել ամեն մի մարդու իրաւունքը հապում է մեզ ընդունել ամեն մի մարդու իրաւունքը:

<sup>1)</sup> Այդ մասին նայել «Յառաջի Գրադարանի» «Ինչ է իրաւական պետութիւնը» զբայլել:

ւատալու, մտածելու և զգալու իր խղճի հրամայածի պէս, այդ գէպքում ինքնորոշման օրէնքը հրամայում է մեզ ընդունել նոյն անհատի իրաւունքը վարւելու համաձայն իր խղճի: Միակ սահմանափակումը, որ մենք կարող ենք պահանջել ազատորէն ինքնորոշուող անհատից—նա է, որ նրա ինքնորոշման ազատութիւնը չը խանգարէ ուրիշ անձերի գործունէութեան ազատութիւնը: Խելահառ մարդը միշտ կարող է հասնել դրան, համաձայնութեան գալով իր նմաների հետ:

Այդպէս ուրեմն՝ խղճի ազատութեան սկզբունքը պահանջում է խոստովանել անհատի ինքնորոշման և ինքն իրան կարգադրելու (աւտօնոմիայի) <sup>1)</sup> իրաւունքը, իսկ այդ իրաւունքից խելացի կերպով օգտաելը պահանջում է համաձայնութեան գալ ուրիշ անձերի հետ, այնպէս որ նրանցից ամեն մէկի ազատութիւնը սահմանափակվի միւսների ազատութիւնով:

### ԱՆՀԱՏԻ ԵՒ ԱԶԳՈՒԹԵԱՆ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄԸ:

Մենք մի քիչ առաջ տեսանք, որ անհատի կեանքն ստեղծագործութիւն է: Ուրիշ խօսքով—միայն անհատն է հանդիսանում ամեն տեսակ հագեկան ու նիւթական կուլտուրայի աղբիւր: Կուլտուրա ասելով, մենք հատկանում ենք նիւթական և հոգեկան այն բոլոր բարիքների ամբողջութիւնը, որոնցով մարդիկ օգտաւում են իրանց կա-

<sup>1)</sup> Բառացի կերպով առնելով, «աւտօնոմիա» նշանակում է «ինքնորէնսպրութիւն»:

րիքներին բաւարարութիւն տալու համար, նոյնպէս և այն հիմնարկութիւնները (կարգ ու կանոնը, հասարակական կազմը), որոնց մէջ ապրում են մարդիկ: Սակայն անհատը օդի մէջ չէ ճախրում, այլ ապրում է ամեն մի մարդու մէջ: Միայն անձնաւորութիւնը մէկի մէջ տւելի խիստ կերպով է արտայայտւած, ինչպէս բոլոր տաղանդաւոր մարդկանց մէջ,—միւսի մէջ նա տւելի նշագ նշմարելի է, այդպիսի մարդն տւելի նման է ուրիշներին, ինչպէս ասում են, նա իր սեփականը, միայն իրեն յատուկ բան տւելի քիչ ունի իր մէջ:

Յայց մարդը կամ մարդկային կենդանի անձնաւորութիւնը երբէք չի լինում ընդհանրապէս մարդ, առանց զանգանութիւնների: Ոչ, նա իր նմանների հետ կապւած է լինում հազար ու մի զանազանաւեսակ թելերով: Այդ պատճառով իրաւացի է տառւմ Զիմմէլը<sup>\*</sup>), որ անհատը արդիւնք է իրար հանդիպող ու ընդմիջող հասարակական շրջանների, որոնց մէջ նա մտնում է իրը նրանց մի մասը: Իսկապէս՝ մեզանից ամեն մէկը լինում է անդամ ընտանիքի, համայնքի, դասի, զանազան մասնաւոր ընկերութիւնների, պետութեան, ազգութեան: Այդ բոլոր ընկերակցութիւնների պատկանելը բնական, կամաւոր և սոխապողական ընաւորութիւն ունի և ազգում է ամեն մի մարդու վրայ. այդ ազգեցութիւնների գումարը համարեած ամբողջապէս բացատրում է մեզ արւած անձնաւորութեան ինչ լինելը:

Անբացատրելի է մնում անձնաւորութեան մէջ միայն իրան և ոչ մի ուրիշ մարդու չպատկանող այն մնացորդը,

<sup>\*)</sup> Գերմանական մի յայտնի վեկսուփայ է:

որը նըան տարբերում է միւս անձերից, եթէ նոյն իսկ սրանք էլ լինէին նոյն թւով և նոյն կապակցութիւնների արդիւնք, որոնց անդամ է և նա:

Այս ըռպէիս մեզ հետաշըքում է անհատի պատկանելը միայն աղգային ընկերակցութեան:

Վերեում մենք ընդունեցինք անհատի լիակատար ինքորոշման (աւտոնոմիա) անհրաժեշտութիւնը: Այժմ մենք լիապէս հետեւողական կը լինենք, եթէ ընդունենք աղգութեան լիակատար ինքնորոշման անհրաժեշտութիւնը: Պարզ է թէ ինչու: Նախ և առաջ՝ ամեն մի աղգ, ինչպէս վերեւում ցոյց տրւեց, բաղկացած է մի խումբ անհատներից, որոնք կապւած են իրար հետ գոնէ, լեզւի և պատմակուլտուրական տրադիցիայի\*) ընդհանրութեամբ:

Անհատի կեանքն անց է կենում ստեղծագործութեան մէջ: Ստեղծագործելիս մարդը կարիք է զգում հումնիւթի, (մատէրիալի): Նրա ձեռքի տակ, իրան ամենից աւելի մօտ գտնում է այն մատէրիալը, որ տալիս է իր պատկանած աղգութեան կուլտուրան: Այդ պատճառով էլ նրա ստեղծագործութիւնն աւելի բեղմնաւոր կը լինի իրան ընտանի աղգային միջավայրում: Եթէ աղգային կեանքի մթնոլորդը ներշնչւած է աղատութիւնով. նրա անդամները կարող են անվրդով անձնատուր լինել ստեղծագործութեան: Բայց ստեղծագործութեան աղատութիւնն արդիւնք է երկու ձակատի վրայ մղւած կուրի, մի կողմից պէտք է կուել իր երկրի ոստիկանական հիմնարկութիւնների դէմ, որպէս զի ապահովւի ամեն մի անձի ինքնորոշման աղատութիւնը,—

\*) Հաստատւած հասարակական սովորութիւններ, հայեցքներ, ընոյթ:

միւս կողմից՝ եթէ մի աղգութիւննւածւած է կամ ճնշւած է միւս աղգութիւնից, պէտք է կուել տիրող աղգութեան զէմ, պէտք է ձգտել աղատուել նրա հալածանքներից: Այս վերջին տեսակի կուի բովանդակութիւնը կամ նպատակն է աղգային ստեղծագործութեան աղատութիւնը: Այդ կամ համար փչացւում են շատ ոյժեր, որոնք՝ եթէ ճնշւած աղգութիւնորոշում ունենար, կարող էին գործադրւել նորանոր ստեղծագործութեան համար նոյն աղգի ներսում: Իւկ ամեն մի աղգութեան ասածադիմութիւնը մի քայլ առաջ է ամբողջ մարդկութեան համար, որովհեակ վերջինը բաղկացած է աղգութիւններից: Ուրեմն՝ աղգային ստեղծագործութիւնը յառաջդիմական քայլ է. գա ոչ մի կամկած չէ վերցնում: Եւ եթէ աղգային ստեղծագործութեան ամենածեռնառ պայմանը աղգային աւտոնոմիան է, այսինքն՝ որոշ աղգի կեանքի կազմութիւնը որոշել նոյն աղգի անդամների ուղածի պէս՝ առանց կախում ունենալու միւս աղգերի ցանկութիւններից,—այդպիսի դէպքում առաջնիմական երևոյթ է և այն կուր, որ մզում են մի աղգի կուլտուրական և քաղաքական աղատագրման ու վերծնութեան համար:

Սպանել որ և է աղգային կուլտուրա՝—ոճիր է, որովհետեւ մենք չենք կարող նախադուշակել, որ այս ինչ աղգի ստեղծագործութիւնն, ընդհանուր մարդկային տեսակէտից, գատապարտւած է անպաղութեան: Գոնէ մինչեւ այժմ ամեն մի աղգ որ և է բան մացըել է համաշխարհային մարդկութեան գանձարանը:

Աղգային աւտոնոմիան աղատագրման է աղգային ստեղծագործութեան արդիւնաւորութիւնը: Այդ պատճառով

նա ցանկալի է և նպատակայարմար:

Ժողովրդական ստեղծագործութիւնն այդ շրջանին է պատկանում նաև հասարակական օրենսդրական ամբողջ գործը, ինչպէս օրինակ՝ բանւորների ապահովագրութիւնը և աշխատանքի պաշտպանութիւնը գործարաններում և ֆաբրիկաներում:

Բնականաբար՝ պրոլետարիատն աւելի շուտով ձեռք կը բերէն յաջողութիւն հասարակական քաղաքականութեան շրջանում աւտոնոմ երկրում, քան զրայից ճնշւած վայրում: Որովհետեւ աւտոնոմ երկրում նա ստիպւած չէ ոյժ գործ դնել ազգային կուի համար: Կը նշանակէ՝ պրոլետարիատը, ներկայի շահերի տեսակէտից արդէն պիտի պաշտպանէ աւտոնոմիայի պահանջը: Այդ պիտի պահանջէ ոչ միայն արտաքին կողմից ճնշւած երկրի պրոլետարիատը, այլ և ճնշող երկրինը, որովհետեւ, հակառակ դէպքում, նա էլ ստիպւած է լինելու իր ոյժերի մի մասը կորցնել ազգային կուի վրայ և, որ վատթարագոյնն է, ճնշելու համար: Պրոլետարիատն, ինքը լինելով ճնշւած, պէտք է հասկանայ, որ իրան, մարդկութեան ամեն տեսակ ճնշումից ազատելու համար մարտնչողին, անվայել է օգնել ազգամոլ քաղաքականութեանը և լինել ճնշողների շարքում: Եւ մենք տեսնում ենք որ Ռուսաստանի և Աւստրիայի բոլոր ճնշւած ազգութիւնների պրոլետարները, ուսւական և աւտորիական պրոլետարների հետ միասին, պահանջում են ընդունել ամեն մի ազդութեան իրաւունքը լինակատար կերպով ինքնորոշելու:

Միւս կողմից՝ սօցիալիստական զրականութեան մէջ յաճախ նկատել եմ, որ սօցիալիստական պրօպագանդի յուջողութիւնն աւելանում է երբ պրոլետարիատը կաղմակերպւում է ըստ ազգութիւնների. դեռ չենք խօսում այն

մասին, որ պրօպագանդը կարելի է մղել միայն պրօլետարիատի մայրենի լեզուվ: Եւ իրականութեան մէջ էլ մենք տեմում ենք, որ պրօլետարիատը կազմակերպւել է միայն ըստ ազդութիւնների: Մենք պէտք է քննենք աւտոնոմիայի հարցը աշխատաւոր գիւղացիութեան շահերի տեսակէտից: Ինչ վերաբերում է ճնշւած երկրի աշխատաւոր գիւղացիութիւնը՝ նա աւելի ևս շահագրգռւած է աւտոնոմիայով, քան նոյն երկրի պրօլետարիատի մի մասը դեռ ևս կարող է փախչել հալածանքից որ և է վայր, որովհետեւ «պրօլետարիատը հայրենիք չունի» կամ, աւելի լաւ է ասել՝ ուր կայ գործարան և ֆաբրիկա, այսուղ էլ պրօլետարիատի հայրենիքն է: Իսկ աշխատաւոր գիւղացիութիւնն այդպէս հեշտութիւնով չէ կարող փախչել իր ուղած տեղը: Առաջին՝ այնքան էլ հեշտ չէ վերջացնել տընտեսութիւնը և իր հողի կտորը, իսկ երկրորդ՝ աւելի ևս գժւար է անտեսութիւն հիմնել մի նոր կտոր հողի վրայ. ուր և երբ կը գտնես այդ հողը: Իսկ ազգային կոխւ մղեն աշխատաւոր գիւղացու գրապանի և վիճակի բարելաւման վրայ նոյնպէս վատ է ազգում, ինչպէս և պրօլետարիատի: Իսկանոյնպէս պահ է ազգում, պահ է պրօլետարիատի: Իսկապէս որևէ երկիր ճնշելու համար, նրա մէջ պիտի պահել մեծ զօրք, իսկ աշխատաւոր գիւղացիութիւնը և պրօլետարիատը կազմում են «գնդակ պաղեցնելու» համար միս մտակարարող և նրա պահպանութեան միջոցները հայթայթող գլխաւոր գասակարգերը: Դը նշանակէ՝ ազգութիւններին ճնշելու բոլոր ծախքերը գլխաւորապէս ընկնում են ըստ պիտի ազգի չունենար դասակարգերի վրայ: Իսկ այդ ճընշակարգից օգուտ ստանում են տիրող ժողովրդի բուրժուատական կալւածատէր դասակարգը: Եթէ, օրինակ, հաշւենք, զիան և կալւածատէր դասակարգը:

թէ ոռւս աշխատաւոր ժողովրդի վրայ ինչ է նստում Նեհանոտանում պահւող 200 հազարանոց բանակը և Կովկասում պահւող 100 հազար զօրքը, կը ստանանք հարիւրաւոր միջօններ։ Իսկ յանուն ինչի՞ են կառարւում այդքան զոհերը։ Ոչ ոք չը գիտէ,

### Ա Ի Տ Ո Ն Ո Մ Ի Ա

Կանգ առնենք այժմ աւտոնոմիայի հարցի մի քանի մանրամասնութիւնների վրայ։

Մենք արդէն գիտենք, որ ներկայ պետութիւնները կազմւել են նւաճումներով։ Այդ պատճառով նրանք բազկացած են մի շարք շրջաններից, որոնք իրար նման չեն։ Այդ շրջաններից ամեն մէկը ներկայացնում է, մեծ մասով, մի ամբողջութիւն թէ ազգային և թէ տնտեսական հարցում։ Այսպէս, օրինակ, Ռուսաստանը կազմւած է հետեւալ շրջաններից։ Ֆինլանդիա, Լեհաստան, Ռւկրայինա, Կովկասան Բալտեան երկիր, Լիթվա, Սիբիր, Վերջապէս Վելիկօրուսիա կամ Մեծ-Ռուսական երկիր։ Մեծ-Ռուսական երկիրն էլ իր կարգին բաղկացած է միքանի շրջաններից, որոնք իրար նման չեն աշխարհագրական, կլիմայական, ժողովրդա-տնտեսական պայմաններով։ Կենտրոնական Ռուսաստանը, Վոլգայի ափերի շրջանը, հիւսիսային Ռուսաստանը Ռւրախն ունեն շատ ինքնորինակ յատկութիւններ։ Այդ պատճառով ներքին կառավարութեան ինքիրները պահանջում են, իրանց իրականացման համար, կառավարող իշխանութեան խիստ մօտկութիւն կառավարող վայրին, Զէ կա-

րելի յաջողութիւնով կառավարել մի կենտրոնից, օրինակ՝ Պետերբուրգից՝ այսպիսի մի ընդարձակ երկիր, որպիսին է նոյն խոկ միայն Մեծ-Ռուսիան։ Անհրաժեշտ է նրա վարչութեան մէջ ամենալայն տպակենարութեան ամենալայն զարգացումով։ Այդ աչքի առաջ ունենալով, աւտոնոմիա ասելով, յաճախ հասկանում են ոչ թէ ազգային ինքնավարութիւն, այլ շրջանային։ Այդ պատճառով էլ աւտոնոմիան կարող է լինել ազգային և երկրային (աէրբիտօրիտ) կամ ըրջանային։ Եթէ տրւած ամբողջ շրջանը բնակւած է մի որ և է ազգութիւնով, այդ գէպքում երկրային և ազգային աւտոնոմիայի հասկացողութիւնները նոյնութիւն են կազմում։

Իսկ այն գէպքում, երբ մի շրջանում ազգարնակութեան մեծ մասը պատկանում է մի ազգութեան, խոկ, փոքրամասնութիւնը մի ուրիշ ազգութեան, — այդ դէպքում ակների է, որ տիրող ազգութեանը առաջ ազգա-երկրային աւտոնոմիա, գեղ հարցը լուծւած չի լինի փոքրամասնութեան համար։ Այդպէս է, օրինակ, գործերի գրութիւնը Լեհաստանում, ուր ճնշող մեծամասնութիւնը լեհներ են, իոկ փոքրամասնութիւնը հրեաներ։ Այստեղ հարց է առաջ գալիս ապահովելու փոքրամասնութեան իրաւունքը, խոկ այդ, ներկայ պայմաններում, կարող է բաւարար կերպով վճռել, այսպէս կոչւած՝ կուլտուրական ինքնորոշման ճանաւել, այսպէս կոչւած՝ կուլտուրական ինքնորոշման ճանաւարհով, կամ ազգային կուլտուրական և ոչ ազգա-երկրապահով։ Կամ ազգային կուլտուրական ինքնորոշման այդ հային աւտոնոմիայով։ Կուլտուրական ինքնորոշման այդ հային կացողութիւնը պահանջում է վարչութեան մէջ համեմակացողութիւնը պահանջում է վարչութեան մէջ համեմա-

տական<sup>1)</sup> մասնակցութիւն խառն ազգաբնակութիւն ունեցող շրջաններում: Բացի դրանից, ազգութիւնների կուլտուրական կարիքների համար ծախքերը տալ շրջանի ընդհանուր միջոցներից, կրկին ամեն մի ազգութեան քաղաքացիների թւի համեմատ, փոքրամասնութեան բաժինը պէտք է ծախսուի փոքրամասնութեան ցանկութեան համեմատ: Միայն այդ միջոցով փոքրամասնութիւնը կարող է ապահովել իրան բաւարար քանակութեամբ կուլտուրական-կրթական հաստատութիւններով: Եթէ որ և է ժողովուրդ ապրում է մի քանի շրջաններում, ամեն մէկի մէջ փոքրամասնութիւն կազմելով, նրան պէտք է իրաւունք արւի կազմելու ինքնավար ազգային մի միութիւն կամ դաշնակցութիւն, եթէ նա այդ ցանկայ: Այդ միութեան ազգեցութիւնը կարող է տարածւել այն բոլոր շրջանների վրայ, ուր այդ ազգը կազմում է փոքրամասնութիւն:

Այդուհետեւ երկրային կամ շրջանային աւտոնոմիան չը պէտք է շփոթել ազգայինի հետ: Իսկ ինչ վերը երրում է վերջինին, պէտք է տարբերել ազգա-երկրային աւտոնոմիան կուլտուրական-ազգային աւտոնոմիայից:

### Ֆ է Դ է Ռ Ա Ց Ի Ա

Կոտական իրաւունքի գիտութեան մէջ ֆէդէրացիա անունը տրւում է անկախ պետութիւնների կամ աւտոնոմ շրջանների դաշնակցութեանը, որոնց հիմքը կազմում է դաշնագիրը:

Ֆէդէրացիան հանդիսանում է աւտոնոմիայի բնական

<sup>1)</sup> Ամեն մի ազգութեան անդամների թւի համեմատ:

լրացումը: Ինչպէս որ անհատը չէ կարող առանձնացած կեանք վարել, այլ ստիպւած է շրջապատողների հետ մտնել զանազան համաձայնութիւնների մէջ, այդպէս էլ ամբողջ ժողովրդները արտաքին պայմաններից ստիպւած են լինում իրար հետ համաձայնութեան գալու: Այդպիսի համաձայնութիւնների և զրանց վրայ յենուող ֆէդէրատիվ (դաշնակցական) յարաբերութիւնների հիմքը կազմում է պայմանագրական կողմերի փոխաշարձ օգուտը: Ֆէդէրացիան ենթագրում է ազատ դաշնաք, որովհետեւ ինչպէս տիրոջ և ստրուկի միջն չէ կարող տեղի ունենալ ոչ մի պայմանագրային յարաբերութիւն, այնպէս էլ տիրող և ճնշւած ժողովրդների մէջն: Այդ դէպքում իրար են զարնուում անհաւասար իրաւատէր կողմեր, կոպիտ բռնութիւնը նրանց մէջ հաստատում է տիրապետութեան և ենթարկման յարաբերութիւն: Իսկ ֆէդէրացիայի մասին խօսք կարող է լինել միայն այնտեղ, ուր պատրաստի կան հաւասար իրաւատէր և իրարից անկախ ժողովրդներ, այդ պատճառով էլ ընդունակ դաշնագիր կնքելու, որը հիմնուած է լինելու փոխադարձ յարգանքի վրայ: Այդ պատճառով ֆէդէրացիան արդէն իսկ ենթագրում է աւտոնոմիա:

Վերևում մենք ասացինք, որ ազգային հարցը միայն այն դէպքում կարող է բաւարար լուծում ստանալ պրօլէտարիատի և աշխատաւոր գիտացիութեան շահերի տեսակէտից, եթէ նրա լուծումը կը ստեղծէ ազգային կուլտուրայի համար բարեյաջող պայմաններ, իսկ ազգային թշնամութեան և տարամերժութեան ծագման ու գարգացման համար կառաջացնէ անբարեյաջող պայմաններ: Իսկ դրանք կարելի է հասնել՝ ընդունելով ամեն մի ժողովրդի

համար հաւասար իրաւունքներ, ճանաչելով ազգային աւտոռնոմիան և միացնելով բոլոր աւտոռնոմ և հաւասար իրաւատէր ժողովրդներին եղբայրական դաշնակցութիւնով; Եթէ բարոր ժողովրդները կը վճռեն իրանց շահերին վերաբերող հարցերը փոխադարձ համաձայնութիւնով, երբնրանք կը գործադրեն բնդհանուր ուժերով իրենց բոլորի համար օգտակար միջոցներ, և ոչինչ չեն անել տալ իրար բռնի կերպով, այս ժամանակ ազգային ընդհարութիւնի համար բոլոր առիթները և ազգային թշնամանք մնուցանող պայմաններն արմատախիլ կը լինեն: Սկսելով ժամանակաւոր և մասնակի զրացիական համաձայնութիւններից, երկրագնդի ժողովրդները կամաց-կամաց կանցնեն դէպի արար աշխարհի ժողովրդների դաշնակցութիւնը: Եւ երկրագնդի ժողովրդների այդ եղբայրական դաշնակցութիւնը, սօցիալիզմի իրականանալուց յետոյ, կը դառնայ աշխատաւորների համաշխարհային եղբայրութիւն, որովհետև սօցիալիստական հասարակութեան մէջ բալորը կը լինեն ընդհանրութեան օգտի համար աշխատողներ: Բայց մեզ՝ կապիտալիստական կաղմի տիրապետութեան ժամանակ ապրող սերնդիս համար, որը չը գիտէ թէ երբ կը դայ աշխատանքի յաղթանակի «իսկական օրը» դրամտզիսի դէմ, — մեզ համար անհնար է նստել և միայն սպասել սօցիալիստական կաղմին և նրա աշխատաւորական համաշխարհային եղբայրութեան: Ներկայ պրոլէտարիատը և աշխատաւոր զիւղացիութիւնը պետք է ունենան որոշ ազգային քաղաքականութիւն, որը դիմաւորելու ելնէր աշխատաւորների ապառայ համաշխարհային եղբայրութեանը: Իսկ այդ քաղաքա-

կանութեան<sup>1)</sup>) բովանդակութիւնը պէտք է լինի վերակազմել պետական և միջազետական կեանքն այնպիսի սկզբունքներով, որոնք այժմ՝ կապիտալիզմի տիրապետութեան օրով էլ տանէին դէպի ժողովրդների եղբայրական դաշնակցութիւն: Եւ ինչպէս որ հողի համայնացումը մի քայլ է դէպի սօցիալիզմը, այնպէս էլ ազգային աւտոռնոմիան և ազատ ազգութիւնների ֆէլէրացիան հանդիսանում են իրք մի խոշոր քայլ դէպի սօցիալիստական հասարակութեան շուտափոյթ իրականացումը: Ներքնապէս ազատ և իրարից անկախ ժողովրդների եղբայրական դաշնակցութիւնը հող կը պարագանէ աշխատաւորների համաշխարհային եղբայրութեան համար և ազգային թշնամանքը, տարածայնութիւնները և կուրս հասցնելով նւազագոյն չափերի, հնարաւորութիւն կը տայ թէ պրոլէտարիատին և թէ աշխատաւոր գիւղացիութեանը կենտրոնացնելու իրանց բոլոր ուժերը սօցիալիզմի համար կազմակերպւած կոիւ մղելու վրայ:

### ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Թուստական հոկայական կայսրութիւնն էլ կազմւել է գրաւումների ճանապարհով, և այժմ ճաթ-ճաթում է ամեն կողմից: Հարիւրից աւելի ժողովրդներ, այս կամ այն ձեւով, քիչ կամ շատ չափով, այս ըստէիս ճնշւում ու կեղերում են մեղանում, վելիկօրուստական չինօվնիկութեան և

<sup>1)</sup>Քաղաքականութիւն կոչւում է կառավարելու արհեստը, միշարք միջոցներ, որոնք ուղղված են հասարակական բնոյթ ունեցող որևէ նպատակի հասնելու:

սուռական բուրժուազիայի օգտին: Աշխատաւոր գիւղացիութիւնը և պրոլետարիատն ստիպւածեն մասնակցել կայսրութեան միւս ժողովրդների ճնշմանը, թէ զինուոր տալով և թէ գրամական ահազին միջոցներով, որ կանում է այդ նպատակի համար ազնւական-բիւրօկրատիական կառավարութիւնը: Սրելով ոռուներին լեների և հրէաների դէմ, թուրքերին հայերի դէմ և կուեցներով բոլոր ազգութիւններին իրար հետ, ազգային հակառակութիւնների և թշնամութեան պղտոր ջրում կառավարութիւնը ձուկ է որսում: Այն ժամանակ, երբ ոռու զինւորները գնդակահարում են լենական գիւղացիներին ու բանւորներին, կողոպտում և կոտորում են թշւառ հրէաներին, իսկ միաժամանակ միւս աշխարհն են ուղարկում և սատակեցնում ուղղափառ գիւղացիներին, որոնք մարտնչում են «բոլոր հողի և ազտութեան» համար,—այդ նոյն ժամանակ կառավարութիւնը, կալւածատէրերը և կապիտալիստները կողոպտում և հալածում են իրանց սրտին շատ սիրելի վելիկօրուս ժողովրդին: Եւ ոստիկանական բռնակալ կարգերն առաջւայ նման յաջողութեամբ թագաւորում են Ռուսաստանում:

Պրոլետարիատի և ոռուսական աշխատաւոր գիւղացիութեան գիտակից մասն արդէն հասկացել է, որ պէտք է դադարել օտար ցեղերին ճնշելուն մասնակցելուց, որ միայն դրանովու այժմ ճնշւած այդ ժողովրդների հետ դաշնակցելով կարելի է վերջնականապէս թօթափել իրաւազրկութեան և ամեն տեսակ կեղեքման այն զարհուրելի լուծը, որն ահա մի քանի դար շարունակ ծանր մզաւանջի նման փաթաթւել է աշխատաւոր թշւառ ժողովրդի վզին:

Միւս կողմից՝ հալածւած ժողովրդների մէջ վերջերս

առաջ է եկել այն գիտակցութիւնը, որ իրանց ստրկացման գլխաւոր պատճառը ոչ թէ վելիկօրուսական խաւար աշխատաւոր ժողովուրդն է, այլ Ռուսաստանի ոստիկանական կարգերը և նրանում տիրապետող կալւածատէր-ճորտատէրերի և բուրժուաների դասակարգերը: Այդ հալածանքին խիստ նպաստում էնակ պրաւուլաւ եկեղեցին, որի քահանաները և եպիսկոպոսները, համարեա առանց բացառութեան, ու հարիւրեակի անդամներ են:

Ուրեմն՝ մի կողմից ոռու բանւորների և գիւղացիների մէջ գիտակցութեան զարգանալը, միւս կողմից էլ ճնշւած ազգերի գիտակցութեան գալը, հող են պատրաստում նրանց միացման համար ազատ Ռուսաստանում կամ ազատ Վելիկօրուսախայի հետ: Ինքնակալութիւնը դրել է իրեն մի անհասանելի նպատակ՝—բռնի կերպով ոռուացնել ոռուսական կայսրութեան բոլոր օտար ցեղերին: Հասկանալի է, թէ ինչու այդ նպատակն անհասանելի, անկարելի է: Ժողովրդական կրթութեան զարգանալով, երբ ամեն տեսակ գիտելիքներ թափանցում են բանւորական լայն խաւերը, սկսում է ժողովրդական ինքնագիտակցութեան զարգացումը: Վերջին բանւորը և գիւղացին<sup>1)</sup> անդամ սկսում են զգալ, որ իրանք անդամ են ոչ միայն որոշ դասակարգի, այլ և որոշ ազգութեան: Յաճախ նոյն իսկ ազգային ինքնագիտակցութիւնն աւելի առաջ է ծնւում, քան դասակարգայինը: Այդ հետեւողականութեան պատճառն այն է, որ ազգային հալածանքներն աւելի զգալի են, բանւոր մարդու խելքին նրանք աւելի

<sup>1)</sup> Ամեն անդամ երբ մենք գործ ենք ածում «գիւղացի» բառը պէտք է հասկանալ ոչ թէ գիւղացի անունը միայն կրող դասը, այլ երկրագործ դասակարգը:

դիւրամատչելի են, քան դասակարգային հակասութիւնները բաց անելը և նրանց հասկանալը։ Միւս կողմից՝ դասակարգային հակասութիւնները երբեմն ստուերի մէջ թագնւած են մնում, որովհետև նրանք միատեղուում են ազգային հակասութիւնների նետ։ Այդպէս է, օրինակ, Բալտիան շրջանում, ուր պրոլէտարիատը և աշխատաւոր գիւղացիութիւնը կազմւած է լատիշներից և էստոնցիներից, իսկ ազնւական հողատէրերը, վաճառականները, գործարանատէրերը և պաշտօնեանները գերմանացիներ են։

Այս գէպքում լատիշ, էստօնացի և գերմանացի ազգութիւնների իրաւահաւատարութիւնը կարող է միայն թեթեւացնել աշխատաւոր ժողովրդի դասակարգային կոփուր կեղեքիչ-գերմանացիների դէմ։ Բայց ընդհանրապէս էլ պէտք է անմիտ ու վայրենի համարել այն միտքը, թէ կարելի է որ և է մէկին բռնի ոռուսացնել։ Արդեօք մեր կառավարութեան քաղաքականութիւնն այդ ուղղութիւնով որ և է յաջողութիւն ունեցել է։ Երբէք, ամենին Այն ինչ, կարծեմ, ձնշման ամեն միջոց, նոյն իսկ տանջանք, վիրածել են և դեռ Վարշաւայում գործ են դնում մինչև օրս<sup>1)</sup>։

Պատմութիւնը մեզ սովորեցնում է, որ՝ որքան աւելի ձնշում են մի ժողովրդի, այնքան աւելի նա դիմադրութիւն է ցոյց տալիս։ Եւ երբ որ և է ժողովրդի ամբողջութիւնը լուսաւըլում է, իսկոյն սկսում է ձգտել ինքնուրոյնութեան, ինքնորշման, աւտոնոմիայի։ Եւ, ինչպէս որ զարգացած անձը դժւարութիւնով է հաշտուում ենթակայ կամ հպատակ վիճակի հետ, այդպէս էլ ամբողջ ժողովուրդն է սկսում ձգտել ազատելու ուրիշ ազգից, որովհետև նրա շարքերում

<sup>1)</sup> Այսինքն մինչև 1905 թւի Օդոսոսու ամիսը։

շատացել է սեփական արժանիքը գիտակցող անձերի թիւը։ Դասակարգային կուի զարգացումն էլ, պրոլէտարիատի և աշխատաւոր գիւղացիութեան ձգտումն էլ դէպիտօցիալիզմի կարելի է բացատրել պրոլէտարիատի և գիւղացիների լայն խաւերում միայն սեփական արժանապատւութեան զգացումի զարգացումով։ Գիւղացին ու բանուրը միայն այն ժամանակ էն սկսում կոփում մզել սոցիալիզմի համար, երբ պարզ հասկանում են իրանց կախւած կամ հպատակ վիճակը ներկայ կապիտալիստական հասարակութեան մէջ։ Ուրիշ մարդկանցից բոլորովին անկախ լինելու ցանկութիւնը գրդում է նրանց աւելի եռանգով մարտնչելու հասարակական կազմի փոփոխութեան համար, որովհետև այդ անկախութիւնը կարող է նրանց կեանքը խնջոյքում տալ աւելի լաւ տեղ, քան այն որ նրանք ունեն այժմ։

Բայց զանամնք մեր ընելիք հարցին։ Ժողովրդական կրթութեան զարգացումը, անհատականութեան և ազգային ինքնագիտակցութեան զօրանալը հաստատում են, որ ոռուսացման բոլոր ջանքերը գատապարտւած են անաջողութեան։ Այդ պատճառով վելիկօրուսական պրոլետարիատը և աշխատաւոր գիւղացիութիւնը պէտք է ընդ միշտ ձեռք քաշեն այդ տեսակ ազգամոլական (նացիօնալիստական) քաղաքականութիւնից։ Մուս պրոլէտարիատը և գիւղացին այս լուսիս մարտնչում են իրանց անձը և իրանց հայրենիքը ոստիկանական ձնշումից ազատելու համար։

Հերոսաբար մեռնում են նրանք ազատ մուսաստանի համար մարտնչելով։ Պետերբուրդի և Պէտէրհօֆի կենտրոնական կառավարութեան ձնշումը պէտք է տապալի և անշուշտ կը տապալի աշխատաւոր ժողովրդի ձեռքով, ոչ

թէ նրա համար, որ նրանից ազատւած աշխատաւոր Ռուսաստանն սկսէ ճնշել ոռւսերէն չը խօսող ուրիշ ժողովրդներին: Ռուս աշխատաւոր ժողովուրդը պէտք է յիշէ, որ միայն ուժի ու բռնութեան միջոցով կարելի է իշխել և տիրանալ ուրիշ ժողովրդների վրայ: Եւ վերին աստիճանի անարդար ու վրդովեցուցիչ կը լինէր, եթէ որ ամեն տեսակ բռնութիւնների դէմ մարտնչողը, ինչպէս որ է այժմ ոռւս աշխատաւոր ժողովուրդը, մտածէր շարունակել ատարդիւնքնութիւնների այդ քաղաքականութիւնը միւս ժողովրդների վրայ: Ռուս պլոլետարիատի և աշխատաւոր գիւղացիութեան կենսական ու անհրաժեշտ շահերը պահանջում են, ընդհակառակը, ընդառաջ ենել աւտոնոմիա և ֆէդէրացիա պահանջող ամեն մի ժողովրդի ցանկութիւններին: Ռուսաստանի զօրութիւնը միայն կաւելանայ, եթէ Ռուսաստանը արծի գայիսոնի և միահեծանութեան տակ ստիպողաբար միացնելու փոխարէն՝ հաստատւի Ռուսական կայսրութեան մէջ ապրող անկախ և իրաւահաւասար ժողովրդների եղբայրական դաշնակցութիւն, հիմնած ազատ դաշնքի վրայ: Ռուս քամուրը և գիւղացին պէտք է հաշւի առնեն գոյութիւն ունեցող այն կատաղութիւնը ոռւս կառավարական իշխանութեան դէմ, որ առաջացրել է մեր կառավարութիւնը Ռուսաստանի բոլոր ոչ-ռուս ժողովրդների մէջ, գազանաբար հարածելով այն ամենը, ինչ որ ռուսական չէ: Մեր կառավարութիւնը, որ կիսով չափ կազմւած է բալուեան շրջանի «իսկական ռուս ոգի» ունեցող գերմանացի բարօններից, ամեն կերպ վիրաւորում է այլազգիների ազգային ինքնասիրութիւնը, և դրանով պէտք է բացատրել Ռուսաստանից ազատւելու այն զարուրելի ծարաւը, որ մենք

նկատում ենք և Ցինլանդացիների և լէհերի, և կովկասեան ժողովրդների, վերջապէս, և Ռւկըայինայի ու Լիթւայի բնակիչների մէջ:

Այդ պատճառով, ամենից լաւն այն է, որ Ռուսաստանի ժողովրդներն իրանց սահմանները որոշեն, ի հարկէ ոչ նրա համար որ յետոյ իրար կոնակ դարձնեն, այլ այն նպատակով, որ մտնեն իրար հետ դաշնակցական յարաբերութեան մէջ: Այդպէս վճռելով իրանց փոխադարձ յարաբերութիւնների հարցը, ամեն մի ազգութեան քանւորները և գիւղացիները կարող են խիտ շարքերով գրոհ տալ հողատէր մագնատների, արդիւնաբերութեան թագաւորների, բորսայի տուգերի, առետրի ասպետների վրայ—յաջող՝ կերպով կըռւելու նրանց հետ:

Որ Ռուսաստանում ազգային հարցի այդպիսի լուծումը ձեռնառւ է ճնշւած ազգերի պլոլէտարների և աշխատաւոր գիւղացիութեանը—երկում է նրանից, որ այդ ազգութիւնների բոլոր սօցիալիստական կուսակցութիւնները պահանջում են աւտոնոմիա և ֆէդէրացիա: Իսկ սօցիալիստական կուսակցութիւնները պաշտպանում են կամ միայն պլոլէտարիատի կամնաև աշխատաւոր գիւղացիութիւն շահերը: Բաւական է ծանօթանալ Լէհական սօցիալիստական կուսակցութեան, Լիթւայի և Լէհաստանի սօցիալ-դէմոկրատիայի, Ռւկրայինայի սօցիալիստական կուսակցութիւնների, Լատիշական սօցիալ-դէմոկրատիայի և լատիշական Սօցիալ-դէմոկրատիական միութեան կամ դաշնակցութեան, վրացիների և հայերի, սօցիալիստական կուսակցութիւնների ծրագրների հետ, համսգւելու համար, թէ որպիսի կարեւը նշանակութիւն են տալիս այդ բոլորը աւտոնոմիային և

ֆէկէրացիային։ Միայն «ուստական, միակ, մեծ» սօցիալ-գէմօկրատիան բանւորական կուսակցութիւնն՝<sup>1)</sup> է, որ մեն մենակ է կանգնած Ռուսաստանի սօցիալիստական կուսակցութիւնների բազմանդամ ընտանիքում։ «Պրօլէտարիատի գործը չէ», յայտնեց նրա կենտրոնական օրգանը, «ֆէկէրալիզմ և ազգային աւտոնոմիա քարողելլը»։ Էն, ինչ արած. չը կայ ընտանիք՝ առանց մի հրէշ անդամի, ասում է ուստական առածը։

Մենք ասում ենք, որ ուստական սօցիալ-գէմօկրատիան այս հարցում մենակ է, թէ և «հրէական ընդհանուր բանւորական դաշնակցութիւնը» (Բունդը) նոյնպէս չէ պահանջում ազգային աւտոնոմիա հրէաների համար, որովհետեւ Բունդի տեսակէտը լիապէս հասկանալի է, հրէաները Ռուսաստանում որոշ տէրքիտօրիա չունեն, որի վրայ նրանք կազմէին ազգաբնակութեան մեծամասնութիւնը։ Բացի զրանից՝ Ռուսաստանի սահմաններում հրէաներն անցեալում երթէք ինքնուրոյն պետական կեանք չեն ունեցել և, այսպիսով, «չ մի հնարաւորութիւն չունեն ցոյց տալու Ռուսաստանում որեւ է որոշ անկիւն, որի վրայ նրանք նախադաս իրաւունք ունենային։ Երկրագործ հրէաներ համարեա ամենեին չը կան Ռուսաստանում։ Նրանց մեծամասնութիւնն արհետառ որներ և բանւորներ են այդ պատճառով էլ Բունդի հա-

<sup>1)</sup> Տեղ և ժամանակ չունենալով այստեղ մանրամասնօրէն քըն-նելու ուստական սօցիալ-գէմօկրատիայի հայեացքներն այս հարցի մասին, առաջարկում եմ ինտէլիգէնտ բանւորներին և գիւղացիներին կալողալ Վ. Պոսէի հետաքրքրական յօդւածը «Բարօռա բիլուտեա»-ի № 3-ում (Պետր. 1906 թ. համարի գինը 20 կոպէկ), Յօդւածի վերնագիրն է «Ազգային աւտոնոմիա և համաշխարհային ֆէկէրացիա»։

մար ազգերկրային աւտոնոմիան նշանակութիւն չունի։ Իսկ ազգային-կուլտուրական աւտոնոմիան հրէա ժողովրդին միշտ կը տրւի, եթէ նա այդ ցանկանայ։ Սիօնիստ—սօցիալիստ և ոչ-սօցիալիստ կոչւածներին, որոնք երազում են որ և է տեղում վերականգնել հրէական պետութիւնը, մենք համարում ենք ուտօպիստներ։ Եթէ որ հրէական ժողովուրդն իրապէս կարիք ունենար ինքնուրոյն պետութիւն կազմելու, վաղուց արդէն ստեղծած կը լինէր այդ։ Ներկայումս հրէաների գաղթը Ռուսաստանից կամ շրջապատ պայմաններին յարմարւելն աւելի մատչելի է մասսայի համար—քան մի առանձին պետութիւն ստեղծելը, իսկ մասսան միշտ շարժւում է ամենաթոյլ դիմադրութեան գծով։ Ազատ Ռուսաստանից այլ ևս կարիք չի լինի գաղթելու, բայց հրէաների ձուլու մը միւս ժողովրդների հետ աւելի արագ քայլերով առաջ կը գնայ, քան այժմ։ Հրէական ժողովրդի այդպիսի ճակատագիրը մեզ թւում է անխուսափելի։ Ես աչքի առաջ ունեմ մօտաւոր ապագան, չունենալով ոչ մի տրւած աւելի հեռաւոր ապագայի վերաբերմամբ և աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ մի որ և է տեղում հրէական անկախ պետութիւն ստեղծելու միտքը չափազանց հեռու է Ռուսաստանի միւս ազգութիւնների բանւորական մասսաների շահերից, որպէս զի նրանք էլ յանկարծ ցոյց տային նոյնպիսի ջերմ ձգտում այդ միտքն իրականացնելու, որպիսին ցոյց են տալիս սիօնիստ հրէաները։

Մենք պէտք է այժմ կանգ առնենք այն բանի վրայ, թէ ինչ վիճակում է գտնուում այժմ ուստական իրականութեան մէջ աւտոնոմիայի հարցը։

Թինլանդիան այժմ արդէն համարեա լիակատար աւտոնոմիա է վայելում: Լեհաստանի աւտոնոմիայի հարցը լուծում կը պահանջէ ամենամօտ ապագայում, հէնց որ կը տապալւի ոստիկանական պետութիւնը: Կովկասի աւտոնոմիայի հարցը մի քիչ աւելի բարդ է, որովհետև այդ տեղ ապրում են շատ ազգութիւններ, իրար խառնւած, և կարճ միջոցում դժւար է այնտեղ սահմաններ որոշել:

Հրէական հարցը բաւարար կերպով կարելի է վճռել, լիապէս հաւասարեցնելով հրէաների իրաւունքները Ռուսաստանի միւս ազգութիւնների իրաւունքներին և ապահովելով փոքրամասնութեան իրաւունքները, մի փոքրամասնութիւն, որ նրանք կազմելու են և Լեհաստնում, և Ռւկրայինայում, և Վելիկօրուսսիայում ու Բելորուսսիայում:

Իսկ ինչ վերաբերում է Ռւկրայինայի, Սիբիրի աւտոնոմիային և Վելիկօրուսսիայի շրջանային աւտոնոմիային, կարելի է ներմուծել աստիճանաբար, կարիքը պահանջած չափով: Դրանք, այսպէս ասած, երկրորդ կարգի աւտոնոմիաներ են:

Ես ուզում եմ մի քիչ էլ կանգ առնել Լեհաստանում անյապաղ աւտոնոմիան իրականացնելու հարցի վրայ: Այդ աւտոնոմիան մի առանձին օգուտ ունի ուստական պրօլետարիատի և աշխատաւոր գիւղացիութեան համար: Ահա թէ բանն ինչումն է: Այժմ, Ռուսաստանի, Գերմանիայի և Աւստրիայի սահմանները մշտապէս իրար շփւելու պատճառով, այդ երկրների կառավարութիւնները ծախսում են ժողովրդական ահագին միջոցներ, մտածելով, որ ննարաւոր է նրանց մէջ զինւած ընդհարում: Այդ զինւած խաղաղութիւնը չափազանց թանգ է նստում այդ երեք պետու-

թիւնների աշխատաւոր ազգաբնակութեան վրայ: Իսկ եթէ Ռուսաստանի, Գերմանիայի և Աւստրիայի միջև գոյութիւն ունենայ ազատ Լեհաստանը, նրանց մէջ զինւած ընդհարման հսարաւորութիւնը խիստ կը նւազի: Այդպիսով Լեհաստանը կը խաղայ բուֆէր-պետութեան, մի երկաթէ զսպանակի գեր, որը կը թուլացնէ ուստաների և գերմանացների փոխագարձ ընդհարումները:

Իսկնուրոյն Լեհաստան ստեղծելու հետեանքն այն կը լինի, որ կը թուլանայ զինւած խաղաղութիւնը, կընկնի միլիտարիզմը<sup>1)</sup> եւրօպայում, կը գաղարի բարքերի այն կոպտացումը, որը միշտ հետեւում է զինւորականութեան չափազանց զարդանալուն: Այդ բոլորն այնքան ձեռնտու են ուստ պրօլետարիատին և աշխատաւոր գիւղացիութեանը, որ նրանք ոչ միայն պիսի օգնեն ու պաշտպանեն Լեհաստանի ինքնուրոյնութեան պահանջը, այլ և կարող են իրանց վրայ պարտաւորութիւն վերցնել պաշտպանելու նրա անկախութիւնը ժամանակակից Գերմանիայի հաւանական ուսնձգութիւնների դէմ: Աւելորդ է ասել նոյն իսկ, որ Լեհաստանի վերականգնումից կօգտի և ամբողջ մարդկութիւնը: Այդ պատճառով խիստ իրաւունք ունի պրօֆէսսօր կիւչեվսկին, որն իր ուստական պատմութեան դասախոսութիւններում դատապարտել է Լեհաստանի բաժանումները, ցոյց տալով, որ այդ բաժանումները, դարձան եւրոպայում Խ|X դարի ընթացքում միլիտարիզմի չափազանց զարգացման գլխաւոր պատճառներից մէկը: Իսկ որ ազատ Ռուսաստանի և ազատ Լեհաստանի միջև կը հաս-

<sup>1)</sup> Միլիտարիզմ կոչում են զինւորական սպառազինութիւնների և պատրաստութիւնների չափազանց զարգացումը, որի վրայ կառավարութիւնները փչացնում են ահագին քանակութեամբ հսասարակական փողեր:

տատուեն եղբայրական դաշնակցական յարաբերութիւններ, այդ մասին կատկած անգամ չէ կարող ծագել: Դա ձեռնտու կը լինի երկու կողմերին էլ, որովհետև Ռուսաստանը և Ղեհաստանն իրար հետ կապւած են տնտեսական հազարաւոր շահերով:

Վերջացնելով մեր տուելիքը, շօշափենք մի քիչ նաև այսպէս կոչւած՝ «Ռուսաստանի ամբողջութեան» հարցը: Մինչև այժմ Ռուսաստանի այդ ամրողութիւնը պահպանում էր միայն զինուորական և ոստիկանական ուժով և գերեզմանաբարի պէս ճնշում էր ոչ միայն ուրիշ ազգութիւններին, այլ և մեղ, ուռւներիս: Եզատ Ռուսաստանում էլ կարելի է պահպանել այդ «միութիւնը» միայն զինուորական ուժով, սակայն դա թույլատրել չէ կարելի: Կը նշանակէ, այդ հարցին պէտք է մօտենալ մի ուրիշ ճանապարհով: Մենք համոզւած ենք, որ այժմեան կայսրութեան սահմաններում ապրող անկախ ժողովրդների միայն ազատ ֆէղերացիան կարող է ապահովել այդ «ամբողջութիւնը» և այն էլ շատ աւելի ամրակուռ ձեռվ, քան սլինները և թնդանօթները: Բայց եթէ նոյն իսկ մենք սխալւած լինենք մեր նախագուշակութեան մէջ, և Ռուսաստանը բաժան բաժան լինի ու կազմւեն մի շարք անկախ պետութիւններ, դա էլ մի մեծ դժբախտութիւն չէ: Մենք արգէն գիտենք, որ ոռւս պրօլէտարիատը և աշխատաւոր գիւղացիութիւնը դրանից միայն կը շահւեն, իրանց բոլոր ուժերը նւիրելով միայն դասակարգային կուին:

Ռուսաստանի «ամբողջութիւնը», այդ բառի ներկայի մաստով, կարելի է պահպանել միայն բանակի միութիւնովը: Իսկ դա ձեռնտու է միայն կալւածատէրերին և բուրժուազիային: Այդ պատճառով ամենեին պատահական մի բան չէ, որ 1905 թւի սեպտ. 12—15-ին տեղի ունե-

ցած համագումարում՝ զեմստվօնների և քաղաքների գործիչներն ընդունել են որոշումներ, որոնք պահանջում են բանակի միութիւնը և ոռւս լեզւի մասն իբր միակ լեզու բանակի և նաւատօրմի մէջ: Յյդափոխ որոշումներ կայացնող մարդիկ պատրաստում են կամ, գոնէ, հնարաւորութիւն են ստեղծում ազատ Ռուսաստանում էլ զինւած ուժով կուելու ոչ միայն միւս ազգութիւնների դէմ, այլ և ոռւս բանաւորների և գիւղացիների դէմ: Ոչ, արգէն չափազանց շատ է տանջւել մեր աշխատաւոր գիւղացիութիւնն ու պրօլէտարիատը ոռւսական մի և միակ բանակից և նրա գլուխը կազմող Միներից, Ռիմաններից, Ռէնէնկամպֆներից, Մէլէլ-Զակօմէլսկիներից, Կառլվարուներից և այլն: Բայց միենոյն ժամանակ այդ մի եւ միակ բանակը մեղ չըտւեց ոչ մի յաղթութիւն նապօնիայի դէմ պատերազմելիս: Կը նշանակէ բանը նրանում չէ, որ բանակը մի և միակ լինի: Մենք պահանջում ենք ոչնչացնել մշտական բանակը և փոխարէնը հաստատել ժողովրդական միլիցիա (զինւած ժողովուրդ): Իսկ եթէ հնարաւոր չի լինի այդ ձեռք բերել, այն ժամանակ պրօլէտարիատը և աշխատաւոր գիւղացիութիւնը կաշխատեն իրականացնել այն պահանջը, որի համեմատ ամեն մի քաղաքացի պէտք է կատարէ իր զինւորական ծառայութիւնն իր ճննդավայրում: Այն ժամանակ զօրքերը չեն գնդակահարի աշխատաւոր ժողովրդին, իսկ բանակի «միութիւնը» կը գնայ յաւիտենականութեան գիրկը: Ամեն մի ժողովուրդ կունենայ իր բանակը ժողովրդական իրաւունքները պաշտպանելու համար: Միմիայն այդ պայմանով որեէ աւտոնոմիա կունենայ իսկական արժէք: Էլ ինչ ազգերի իրաւա-

հաւասարութիւն է, ել ի՞նչ ազգային աւտոնոմիաներ են, երբ բոլոր զօրքերը կը գտնւեն տիրող ազգութեան բուժուազիայի ձեռքում և նրա հրամանի տակ: Իսկ այն ժամանակ ինչոք կը պաշտպանեն իրանց իրաւունքները տիրող ազգութեան պրօլէտարիները և աշխատաւոր դիւզացիներն այդ իսկ բուժուազիայից: Եւ արդեօք «ուսւական միակ բանակ» եղած ժամանակ ամեն տեսակ ուստոնոմիա օդը չի ցնուի: Անօդուտ չի լինի նկատել, որ Ռուսաստանի, բանակի և նաւատօրմի բոլոր այդ «մի և անբաժանելիութիւնները» մտել, տեղ են գտել ժողովրական ազատութեան կուսակցութեան ծրագրում: Այս, պ. պ. Կադէտներ, դուք երբէք չէք կարողանալու քաղաքականութիւնից քննութիւն բոնել նոյն իսկ կադէտների կօրպուսի ծրագրի համեմատ:

### ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ

(Սօցիալիստ-Յեղափոխականների)

Վերնում պարզաբանւած հայեացքներն աչքի առաջ ունենալով, այժմ ակներեն է, թէ ինչու սօցիալիստ յեղափոխականների կուսակցութիւնը քաղաքական և իրաւուկան խնդիրներում ընդունել է հետեւալ ծրագիրն ազգային հարցի վերաբերմամբ. «Հնարաւոր եղածին չափ լայն կերպով իրագործել առանձին ազգութիւնների մէջ դաշնակցական (ֆեդերատիվ) յարաբերութիւններ, ճանաչել նրանց ինքնորոշման անպայման իրաւունքը, մայրենի լեզուն մտցնել բոլոր տեղական, հասարակական և պետական հիմնարկութիւնները: Խառն ազգաբնակութիւն ունեցող շըջաններում ամեն մի ազգութիւն իրաւունք պէտք է ունենայ իր թւի

համեմատ մաս սաւանալու բիւջէի<sup>1)</sup> այն բաժնից, որը յատկացւած կը լինի կուլտուրական-կրթական նպատակների և այդ միջոցները նա պէտք է գործադրէ ինքնավարական սկզբունքով»:

Դբա հետ միասին, մարտնչելով աւելորդ կենտրոնացման դէմ, այսինքն պետութիւնը մի որևէ է կենտրոնից կառավարելու ձգտման դէմ, և յեղափոխականների կուսակցութիւնը պահանջում է «գէմօկրատիկական հանրապետութիւն» նրա նահանգների և քաղաքային ու գիւղական համայնքների լայն աւտոնոմիա»<sup>2)</sup>:

Վերնում մեր յանձնաբարած յօդւածում՝ «Ազգային աւտոնոմիան և համաշխարհային ֆեդերացիան» Վ. Ա. Պօստի, հեղինակը, յիշելով, որ ս.-յեղափոխականներն անհամեմատ աւելի համակրանքով են վերաբերւում ազգային աւտոնոմիային և հասարակութեան ֆեդերատիվ կամ դաշնակցական կազմակերպութեան, քան ս.-դեմօկրատները, — ասում է. բայց ընդհանրապէս, ս.-յեղ. կուսոկցութիւնն էլ ցոյց է տալիս անորոշութիւն և տատանում համայնքների ազատ միութեան և ազատ ֆեդերացիայի հարցի վերաբերմամբ»: Մի քանի տակ յետոյ Վ. Պօստին նկատում է. «Լայն աւտոնոմիա», «հնար եղածին չափ լայն կերպավ գործադրել ֆեդերատիվ սկզբունքը», «ինքնորոշման անպայման իրաւունք» արտայայտութիւններն, ինարկէ, մեծ

<sup>1)</sup> Բիւջէ կոչւած է պետական ելե մտքի ամբողջ հաշեւը:

<sup>2)</sup> Մեզ թւում է, որ հեղինակը թէ այս կէտում և թէ առնարակի գրքոյկում այնպիսի ձևով է գործածում «աւտոնոմիա» բառը, որ կարելի է հասկանալ և տեղական ինքնավարութիւն—այսինքն լոկ վարչական մի բաժնում, և թէ իսկականաւոնոմիա՝ այսինքն և վարչական, և օրէնսդրական ապահովությունացում:

բան խոստացող են թւռմ, բայց աւելի հասարակ ու աւելի պարզ կ'լինէք, եթէ որ կուսակցութիւնն ուղղակի յայտարարէք որ ձգտում է հաստատել համայնքների և շրջանների աղատ դաշնակցութիւն, աղատ՝ այն մտքով, որ ամեն մի համայնք և շրջան կարող են բաժանել նոյն իսկ այն դէպւում, երբ նրանք զուտ ոռուսական են, ոչ թէ այլացեղ»:

Մեզ թւռմ է, թէ այդ յանդիմանութիւնն անհիմն է: Հարցն «անորոշութեան», տատանումների մէջը չէ և ոչ էլ նրանում թէ ինչ է «աւելի հասարակ ու աւելի պարզ»: Միթէ պ. Պօսէն չէ տեսնում, որ նեղկայումս յայտարարել ամեն մի ոռուս համայնքի և շրջանի աղատ իրաւունքը բաժանելու և ում հետ ուզում է միանալու՝—միայն ինքնամիթարութիւն է, դա կը նշանակէ սկզբունքները պահել անարատ, մաքուր, հէնց սկզբունքների սիրու համար:

Այս բոտէիս դրա պէտքը չը կա, ոչ միայն ոռուսական համայնքները, այլև շրջաններն անգամ բաժանելու չեն պատրաստում: Ճշմարիտ է Սիրիլն Ռուսաստանից բաժանելու կողմնակիցներ կան, բայց թէ նրանք ինչ չափով անհրաժեշտ են համարում Սիրիրի աւտոմոմիան, անյայտ է: Ինչքան արդեօք այդ ձգտումը թափանցել է Սիրիրի բանուրական մասսայի մէջ, նոյնպէս անյայտութեան խաւարով է ծածկուած: Պատահել է ինձ լսել ուկրայինցի և բելօրուս գիւղացիներից, որ, օրինակ Ուկրայինայի և Բելօրուսիայի լիակատար բաժանման պահանջը Ռուսաստանից՝ միայն ինտէլլիգէնցիայի պահանջն է և ոչ թէ ժողովրդական մասսայի պահանջը: Այդ պատճառով ներկայումս պահանջել մի ազգութեան սահմաններում համայնքների և շրջանների աղատ միութիւն՝ չը նշանակի արդեօք հիմնել

իր ծրագիրը աւագի վրայ: Իսկ նւազագոյն ծրագրի մէջ մացնել այնպիսի պահանջներ, որոնք իրականացման հաւանականութիւն չունեն,—և այն էլ ոչ միայն այս բուպէիս, այլ և մօտաւոր ապագայում անգամ, —կը լինի անօգուտ գրադմունք:

Բացի դրանից՝ եթէ ու յեղափոխականները գերմանական և ոռուսական սօցիալ-դեմոկրատիայի նման չեն կարող իրանց համարել սօցիալիստ-պետականներ, բայց և նրանք անիշխանականներ չեն: Ոչ մի բոտէ չը պէտք է մոռանալ, որ քանի գեռ գոյութիւն ունի հասարակութիւն, միշտ գոյութիւն կունենայ և նրա կարգաւորումը, այսինքն՝ հասարակական յարաբերութիւնների կազմակերպութիւն: Անիշխանականների քարոզած անստիպողական համայնակեցութիւնը մի բացարձակ իդէալ է, այսինքն մի անհասաննելի բան, որին սակայն, յաւէտ ձգտում է մարդկային հասարակութիւնը: Եւ իսկապէս, ինչպէս Պ. Կրապօտկինն իր հետաքրքրական գրքում—«Փոխագրած օգնութիւնը մարդկանց և կենգանիների մէջ»<sup>1)</sup> ցոյց է տւել, ու մարդկութեան ամբողջ պատմութեան միջով կարմիր թելի նման անցնում են համաձայնման և փոխադարձ օգնութեան սկզբունքները, զուգանեսաբար համայնակեցութեան ստիպողական ձևերին: Բայց եթէ Պ. Կրապօտկինի այդ աշխատաւթիւնից կարելի է մի անկասկածելի և ուսանելի միտք դուրս բերել, դա այն է, որ ժամանակի ընթացքում մարդկային հասարակութիւնները վերակազմում են. իշխանութեան և ենթարկման

1) Իմ կարծիքով դա ամենաարժէքաւոր փորձն է անարխիզմը բնական, գիտական և պատմականօրէն հիմնաւորելու:

յարաբերութիւնները տեղի են տալիս համաձայնութեան և փոխադարձ օգնութեան սկզբունքներին։ Կարելի է ափսոսալ, որ մինչև այժմ դա կատարւում էր խիստ գանդաղօրին։ Պէտք է համոզւած լինել, որ պետական ազատ ձևերում այդ վերակազմութիւնն աւելի արագ առաջ կը գնայ։ Բայց չը պէտք է մոռանալ, որ այդտեղից մինչև պետութեան իշխանութեան և ենթարկման լիակատար ոչնչացումը դեռ անվերջ տարածութիւն կայ։ Դա հեշտութեամբ կը հասկանանք, եթէ ուշադրութեան առնենք, թէ ինչ է լինում ստիպողական կարգաւորման ինդիրը պատմական զարգացման ընթացքում։ Որոշ դէպքերում նա նեղանում, սահմանափակւում է. բայց դրա փոխարէն նա լայնանում է ուրիշ դէպքերում։ Եթէ զանոսզան ինքնուրոյնութիւններ և ազատութիւններ (խղճի, խօսքի, ժողովների, միութիւնների և այլն) վերջին դարի ընթացքում սահմանափակեցին հասարակական յարաբերութիւնների ստիպողական կարգաւորման շրջանակը, դրա փոխարէն սօցիալական և ագրարային (բանտորական և հողային) քաղաքականութեան ձեռք առած միջոցները նրան նորից ընդլայնեցին։ Բուրժուաների և ճորտատէրեկալւածտէրերի համար դա զարհուրելի է, բայց պրօլէտարիատի և աշխատաւոր գիւղացիութեան համար այդպիսի փոփոխութիւններն ստիպողական կարդ ու կանոնների մէջ շահաւէտ են և բարեյաջող կուլտուրական առաջադիմութեան տեսակէտից։

Բացի դրանից, չը պէտք է մոռանալ, որ ժամանակի ընթացքում ստիպողական կարգաւորման հղանակներն էլ մեղմանում, աւելի նւազ զգալի են դառնում, այդ պատ-

ճառով էլ աւելի նւազ բողոք են յարուցանում, և, բացի այդ, դէմօկրատիայի զարգացման հետ միատեղ՝ ստիպողական բնոյթ ունեցող միջոցներն աւելի և աւելի ուղղված են արխտօկրատիական փոքրամասնութեան դէմուում են արխտօկրատիական մեծամասնութեան օգտին։ Հետեւալար՝ նրանց ծանրութիւնն զգում են աւելի նւազ թւով անձեր։

Այս ամենը կշռադատելով, դժւար չի լինի ըմբռնել անհիմանական անսախիպողական համայնակեցութեան իրականացման անհնարինութիւնը։ Բայց նրա գաղափարն, իբր մարդկային կենցաղի լաւագոյն իդէալի, պէտք է ապրի ամեն մի պրօլէտարի և գիւղացու գիտակցութեան մէջ։ Բոլոր աշխատաւորներն անգիտակցօրէն ջանում են «եօլա զնալ» առանց ստիպման։ Միայն աշխատաւոր ժողովրդի կեղեքիչները կարող են, ինչ կուգէ լինի, պաշտպան լինել ստիպման, որովհետև առանց ստիպողականութեան կամ բռնութեան անհնար է այդ պրոտարոյնների գոյութիւնը։

Այժմ հասկանալի է, թէ ինչու ս. յեղ. կուսակցութիւնը չէ մտցրել իր ծրագրի մէջ այն պարզ պահանջը, որն այնպէս խիստ ցանկանում է տեսնել նրանում ։ Պոստէն։ «Ազատ համայնքների և շրջանների ազատ միութիւնների» պահանջը եթէ դնէր ս. յեղ. կուսակցութիւնը, թիւններից պահանջը եթէ դնէր ս. յեղ. կուսակցութիւնը, զրանով իսկ իր վրայ պարտաւորութիւն վերցրած կը լինէր զրանով իսկ իր միարը մի միջավայրում, որը քիչ է հակամիտ քարոզել այդ միարը մի միջավայրում, որը քիչ է հակամիտ կուսակցութիւնը միայն բարդացրած կը լինէր քաղաքի և կուսակցութիւնը մասսաների կազմակերպութեան խընդիւղի աշխատաւոր մասսաների կազմակերպութեան խընդիւղի աշխատաւոր մարտնչելու ամբողջ «հողի և ազատութիւնը» յաջողութեամբ մարտնչելու ամբողջ «հողի և ազա-

տութեան» համար։ «Լայն աւտօնօմիա», դաշնակցական յարաբերութիւնների որբան կարելի է լայն գործադրութիւն և գրանց նման արտայայտութիւնները ծրագրի մէջ՝ երբէք չեն խանգարում կուսակցութեանը, կարիք եղած գէպքում, պարզաբանելու այն բոլոր հետեանքները և եղբակացութիւնները, որոնք բղխում են աւտօնօմիայի և ֆէկտրացիայի սկզբունքներից։

Վերջում ես ստիպւած եմ կանգ առնել մի հարցի վրայ, որի պատասխանը չէ կարելի գտնել կուսակցութեան ծրագրում, բայց որը կարիք ունի պատասխանի։

Այժմ Մուսաստանում տեղի ունեցող յեղափոխական ճանապարհով կատարւող փոփոխութիւնների հետեանքներն օրինապէս հաստատելու և ազատ Մուսաստանի համար հիմնական օրէնքներ մշակելու համար, ո. յեղ. կուսակցութիւնը պահանջում է Սահմանադիր ժողով հրաւիրել։ Միևնույն ժամանակ մի քանի սօցիալիստական կուսակցութիւններ, ինչպէս օրինակ, լեհականը, պահանջում են մի առանձին Սահմանադիր ժողով լեհաստանի համար։ Կարծեմ մի այդպիսի ինքնուրոյն սահմանադիր ժողով պահանջում է և նւկրայինայի համար այնտեղի սօցիալիստական կուսակցութիւններից մէկը։

Այդպիսի պահանջների ծնունդը հասկանալի է. այն անվտանգութիւնը, որ առաջացնել է ինքնակալ բիւրօկրատիական Պետերբուրգի վերաբերութեամբ, փոխանցում են նաև ապագայ համառուսական սահմանադիր ժողովի վրայ։ Հարց է ծագում. ինչպէս է վերաբերում կուսակցութիւնը դէպի այդպիսի պահանջները։

Հիմնելով այն համոզման վրայ, որ չէ կարելի բա-

ժանել արջի մորդին, դեռ նրան չը սպանած, ես կարծում եմ, որ բոլոր ժողովրդների համար աւելի ձեռնտու կը լինէր յետաձգել ինքնուրոյն սահմանադիր ժողովների պահանջը և առ այժմ համաձայնել մի համառուսական սահմանադիր ժողովի պահանջի հետ։ Իսկ երբ նա բարե-Սահմանադիր ժողովի պահանջի համաձայն իր աշխատանքները, կարելի յաջող կերպով կը վերջացնէ իր աշխատանքները, կարելի է և նոյն իսկ հարկաւոր է հրաւիրել ցանկացող ազգու-է թիւնների համար սահմանադիր ժողովներ։

### Ե Զ Ր Ա Կ Ա Յ Ո Ւ Թ Ի Ւ Ն


Պրօլէտարիատը և աշխատաւոր դիւղացիութիւնը պէտք է վարեն որոշ ազգային քաղաքականութիւն։ Այդ քաղաքականութեան վերջնական նպատակը լինելու է հաստատել աշխատաւորների համաշխարհային եղբայ-րութիւն, իսկ ներկայումս՝ անկախ ժողովրդների եղբայ-րութիւն։ Դրա հետ միասին պրօլէտարիատը բական վաշնակցութիւն։ Դրա հետ միասին պրօլէտարիատը կիւղացիութիւնը պէտք է կուեն տիրող դասակարգերի-կալւածատէրերի և բուրժուազիայի ազգամոլական (նացի-օնավիստական) քաղաքականութեան դէմ, որովհետև այդ գրգորիչ քաղաքականութիւնը միայն նպաստում է ազգային թթու սպականութեան զարգացմանը։

Պրօլէտարիատի և գիւղացիութեան իսկական հայրենա-սիրութիւնը կայանում է նրանում, որ ցանկանում է տեսնել իր ազգն ու հայրենիքը կուլտուրապէս զարգացած։ Այդ պատճառով ճնշւած ազգութիւնների պրօլէտարիատը

և աշխատաւոր գիւղացիութիւնը պէտք է, նախ և առաջ,  
ձեռք բերեն իրանց ազգի ազատութիւնը, իսկ տիրող  
ժողովրդի պրօլէտարիատը և աշխատաւոր գիւղացիութիւնը  
պէտք է օգնեն նրանց այդ գործում:

Աւտօնօմիան և Ֆէդէրացիան այդ նորատակին հաս-  
նելու միջոցներն են: Դրանք են, որ պիտի ստեղծեն  
աշխատաւոր ժողովրդի սոցիալիզմի անունով մզած դաստ-  
կարգային կուփ համար ամենաբարեյաջող պայմաններ՝  
ամեն մի ազգի ներսում. դրանք են նաև ամենանպաստաւոր  
պայմաններն աշխատաւոր ժողովրդի միջազգային կազմա-  
կերպութեան համար, որը պիտի յաւիտենական կերպով  
թաղէ կեանքի ներկայ կապիտալիստական անարդար կազմը:





ՀՀ Ազգային գրադարան



NL0200828

